



# Ուղեցույց

Ինչպե՞ս ստանալ ՀՀ քաղաքացիություն

Յունուար, 2020թ.

Սույն ուղեցույցը հովանավորուած է «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան դրամաշնորհի շրջանակէն ներս: Այստեղ արտայայտուած է հեղինակի դիրքորոշումը, եւ պարտադիր չէ, որ ան համընկնի «Գալուստ Կիւլպէնկեան» Հիմնարկութեան դիրքորոշումին հետ

## **1. Ո՞վ օրենքի ուժով կը համարուի Հայաստանի Հանրապետության քաղաքացի**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներէն ծնած երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

Հայաստանի Հանրապետության քաղաքացի են նաեւ օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստացած անձերը:

## **2. հիմքերը**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ձեռք կը բերուի՝

- 1) քաղաքացիութեան ճանաչումով.
- 2) ծնունդով.
- 3) քաղաքացիութիւն ստանալու միջոցով.
- 4) քաղաքացիութիւնը վերականգնելու միջոցով.
- 5) քաղաքացիութեան խմբային ձեռքբերման միջոցով.
- 6) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրներով նախատեսուած հիմքերով.
- 7) օրենքով նախատեսուած այլ հիմքերով:

## **3. Որո՞նք կը ճանչցուին իբրեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կը ճանչցուին՝

1) Հայաստանի Հանրապետության մէջ մշտապէս բնակող նախկին ՀԽՍՀ քաղաքացիները, որոնք մինչեւ Սահմանադրության ուժի մէջ մտնելը չեն ունեցած այլ պետութեան քաղաքացիութիւն կամ հրաժարած են անկէ՝ «ՀՀ քաղաքացիութեան մասին» ՀՀ օրենքի ուժի մէջ մտնելու օրէն մէկ տարուայ ընթացքին.

2) Հայաստանի Հանրապետության մէջ մշտապէս բնակող քաղաքացիութիւն չունեցող ազգութեամբ հայերը կամ Հայաստանի Հանրապետության մէջ մշտապէս բնակող օտարերկրեայ քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետութիւններու քաղաքացիները, որոնք մինչեւ 2019 թուականի Դեկտեմբերի 31-ը կը դիմեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստանալու համար.

3) Հայաստանի Հանրապետութիւնէն դուրս բնակող ազգութեամբ հայ նախկին ՀԽՍՀ այն քաղաքացիները, որոնք չունին այլ պետութեան քաղաքացիութիւն: Սոյն

կէտի հիմքով անձը կը ստանայ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն, եթէ օրէնքով սահմանուած կարգով դիմած եւ ստացած է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնը հաստատող փաստաթուղթ: Այս պարագային՝ անձը կը ճանչցուի Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի՝ «ՀՀ քաղաքացիութեան մասին» ՀՀ օրէնքին ուժի մէջ մտնելու պահէն:

#### **4.Ինչպէ՞ս կ'որոշուի Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներէն ծնած երեխայի քաղաքացիութիւնը**

Երեխան, որուն ծնողները անոր ծնունդի պահուն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներ են, անկախ ծննդեան վայրէն, կը ստանայ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն:

#### **5.Ինչպէ՞ս կ'որոշուի երեխայի քաղաքացիութիւնը, երբ ծնողներէն մէկը Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի է, իսկ միւս ծնողի քաղաքացիութիւնը անյայտ է, կամ քաղաքացիութիւն չունեցող անձ է**

Երեխան, որուն ծնողներէն մէկը անոր ծնունդի պահուն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի է, իսկ միւսը անյայտ է կամ քաղաքացիութիւն չունեցող անձ, կը ստանայ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն:

#### **6.Ինչպէ՞ս կ'որոշուի երեխայի քաղաքացիութիւնը, երբ ծնողներէն մէկը Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի է, իսկ միւսը՝ օտարերկրեայ քաղաքացի**

Այն պարագային, երբ ծնողներէն մէկը երեխայի ծնունդի պահուն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի է, իսկ միւսը՝ օտարերկրեայ քաղաքացի, երեխան, անկախ այլ պետութեան քաղաքացիութիւն ունենալու հանգամանքէն, իրաւունք ունի ստանալու Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն՝ ծնողներու գրաւոր համաձայնութեամբ:

Համաձայնութեան բացակայութեան պարագային երեխան կը ստանայ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն՝

- 1) եթէ ան ծնած է Հայաստանի Հանրապետութեան մէջ կամ,
- 2) եթէ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ձեռք չբերելու պարագային՝ կը դառնայ քաղաքացիութիւն չունեցող անձ, կամ

3) եթե կը բնակի Հայաստանի Հանրապետութեան մէջ եւ առկայ է ծնողներէն մէկուն համաձայնութիւնը:

### **7.Վերը նշուածներէն բացի կա՞ն արդեօք դէպքեր, երբ երեխան կը ստանայ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն**

Հայաստանի Հանրապետութեան մէջ ծնած երեխան կը ստանայ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն, եթե՝

- 1) ծնողները քաղաքացիութիւն չունեցող անձեր են.
- 2) ծնողներու քաղաքացիութիւնը անյայտ է.
- 3) ծնողները այլ երկրի (երկիրներու) քաղաքացիներ են, սակայն չեն կրնար իրենց քաղաքացիութիւնը փոխանցել երեխային՝ իրենց քաղաքացիութեան երկրի (երկիրներու) օրէնսդրութեան համաձայն.
- 4) ծնողներէն մէկը քաղաքացիութիւն չունեցող անձ է, իսկ միւսը՝ այլ երկրի քաղաքացի, որ, իր քաղաքացիութեան երկրի օրէնսդրութեան համաձայն, չի կրնար իր քաղաքացիութիւնը փոխանցել երեխային.
- 5) ծնողներէն մէկը քաղաքացիութիւն չունեցող անձ է, իսկ միւսի քաղաքացիութիւնը անյայտ է.
- 6) ծնողներէն մէկուն քաղաքացիութիւնը անյայտ է, իսկ միւսը այլ երկրի քաղաքացի է, որ, իր քաղաքացիութեան երկրի օրէնսդրութեան համաձայն, չի կրնար իր քաղաքացիութիւնը փոխանցել երեխային:

### **8.Նախորդ կետով նշուած պարագաներուն մէջ երեխան ի՞նչպէս կը ստանայ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն**

Երեխան կը ստանայ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն՝ Հայաստանի Հանրապետութեան օրէնսդրութեամբ սահմանուած կարգով Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիի անձնագիր ստանալու համար ներկայացուած դիմումին հիման վրայ:

**9.Ի՞նչ ընթացակարգով ազգութեամբ հայ երեխան կը ստանայ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն, երբ ծնողները Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներ չեն**

Ազգութեամբ հայ երեխան, որուն ծնողները Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներ չեն, Հայաստանի Հանրապետութեան մէջ բնակութիւն հաստատելու (բնակչութեան պետական արձանագրութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան հասցեով հաշուառուելու) պահէն ունի Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու իրաւունք:

Այս պարագաներով երեխան կը ստանայ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիի անձնագիր ստանալու համար ներկայացուած դիմումին հիման վրայ, որուն կը կցուի նաեւ ծնողներուն գրաւոր համաձայնութիւնը:

#### **10. Ի՞նչ է քաղաքացիութիւնը վերականգնելը՝ որպէս քաղաքացիութիւն ստանալու հիմք**

Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնը կորսնցուցած անձի քաղաքացիութիւնը, իր դիմումին համաձայն, կրնայ վերականգնուիլ, եթէ կը բացակային «ՀՀ քաղաքացիութեան մասին» ՀՀ օրէնքի 13-րդ յօդուածի եօթերորդ մասով սահմանուած հիմքերը (քաղաքացիութիւն ստանալու դիմումը կը մերժուի, եթէ տուեալ անձը իր գործունէութեամբ կը վնասէ պետական եւ հասարակական անվտանգութեան, հասարակական կարգին, հանրութեան առողջութեան եւ բարքերուն, այլոց իրաւունքներուն եւ ազատութիւններուն, պատիւին եւ բարի համբաւին), եւ եթէ անոր քաղաքացիութիւնը չէ դադրած նոյն օրէնքի 23-րդ յօդուածի 2-րդ կէտի հիմքով (քաղաքացիութիւնը կը դադրի կեղծ փաստաթուղթերու կամ կեղծ տուեալներու հիման վրայ քաղաքացիութիւն ստանալու պարագային, եթէ անձին կողմէ կեղծ փաստաթուղթեր կամ կեղծ տուեալներ ներկայացնելը հիմնաւորուած է օրէնքով սահմանուած կարգով, եւ արարքը կատարելու պահէն չէ անցած 5 տարի):

Այլ երկրի քաղաքացիութիւն ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնը կորսնցուցած, սակայն այլ երկրի քաղաքացիութիւն չստացած անձը, իր դիմումին համաձայն, կրնայ վերականգնել Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնը:

#### **11. Ո՞ր պարագային կ'իրականանայ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութեան խմբային ձեռքբերումը**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության խմբային ձեռքբերումը կ'իրականանայ ներգաղթի եւ օրէնքով սահմանուած այլ պարագաներու՝ Հանրապետության Նախագահի հրամանագրով:

**12. Ո՞վ իրաւունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստանալու համար**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն չունեցող 18 տարին լրացած, գործունակ, օտարերկրեայ պետութեան մէջ բնակող (գտնուող) կամ Հայաստանի Հանրապետութեան մէջ օրինական հիմքով բնակող (գտնուող) իւրաքանչիւր անձ իրաւունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու համար, եթէ՝

- 1) օրէնքով սահմանուած կարգով վերջին երեք տարին մշտապէս բնակած է Հայաստանի Հանրապետութեան մէջ.
- 2) կրնայ արտայայտուիլ հայերէն լեզուով եւ
- 3) ծանօթ է Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեանը:

**13. Անձը իրաւունքն ունի՞ արդեօք դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստանալու համար, եթէ օրէնքով սահմանուած կարգով վերջին երեք տարին մշտապէս չէ բնակած Հայաստանի Հանրապետութեան մէջ եւ չի կրնար արտայայտուիլ հայերէն լեզուով**

Այդ պահանջներու բացակայութեան պարագային Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն կրնայ ստանալ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն չունեցող այն անձը՝

- 1) որ մինչեւ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին երկու տարուան ընթացքին օրէնքով սահմանուած կարգով գրանցուած ամուսնութեան մէջ գտնուած է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիի հետ եւ այդ երկու տարուան ընթացքում առնուազն 365 օր օրինական հիմքերու առկայութեամբ բնակած է Հայաստանի Հանրապետութեան մէջ կամ ունի Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի երեխայ.
- 2) որուն ծնողները կամ անոնցմէ մէկը նախապէս ունեցած է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն կամ ծնած է Հայաստանի Հանրապետութեան

մէջ, եւ որ 18 տարին լրանալէն ետք՝ 3 տարուայ ընթացքին, դիմած է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու համար.

3) որ 1995 թուականի Յունուարի 1-էն ետք, իր դիմումին համաձայն, դուրս եկած է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութենէն.

4) որ Հայաստանի Հանրապետութեան մէջ ճանչցուած է փախստական կամ կը հանդիսանայ Հայաստանի Հանրապետութեան մէջ բնակող քաղաքացիութիւն չունեցող անձ:

**14. Կրնայ արդեօք անձը ստանալ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն, եթէ օրէնքով սահմանուած կարգով վերջին երեք տարին մշտապէս չէ բնակած Հայաստանի Հանրապետութեան մէջ, չի կրնար արտայայտուիլ հայերէնով եւ ծանօթ չէ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան:**

Առանց այդ պահանջներու պահպանման՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն կրնայ ստանալ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն չունեցող ազգութեամբ հայ անձը կամ անգործունակ անձը, որուն խնամակալը Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի է:

**15. Կա՞ն արդեօք օրէնքով նախատեսուած բացառիկ այլ դէպքեր, երբ անձը կրնայ ստանալ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն**

Առանց օրէնսդրութեամբ սահմանուած պահանջներու պահպանման՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն կրնայ շնորհուիլ Հայաստանի Հանրապետութեան բացառիկ ծառայութիւններ մատուցած անձերու:

**16. Քաղաքացիութիւն ստանալու համար արդեօք ազգութեամբ հայերը ունի՞ն արտօնութիւններ**

Ազգութեամբ հայերը Հայաստանի Հանրապետութեան մէջ բնակութիւն հաստատելու պահէն ունին Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ձեռք բերելու իրաւունք:

Ազգութեամբ հայերը Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնը ձեռք կը բերեն օրէնքով սահմանուած *պարզեցուած* կարգով:

**17. Ո՞ր պետական մարմինն անհրաժեշտ է դիմել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու նպատակով անհրաժեշտ է դիմել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային եւ վիզաներու վարչության (հասցե՝ քաղաք Երևան, Դաւթաշէն, 4-րդ թաղամաս, 17/10 շէնք, թէժ գծի հեռաձայն՝ +374 10 37 02 64):

**18. Ո՞ր մարմինն կրնայ դիմել անձը, եթե կը գտնուի Հայաստանի Հանրապետության պետական տարածքէն դուրս**

Այս պարագային անձը կրնայ դիմել օտարերկրեայ պետութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւններ եւ հիւպատոսական հիմնարկներ:

**19. Ո՞վ կրնայ դիմել պարզեցուած կարգով Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եւ ի՞նչ փաստաթուղթեր անհրաժեշտ է ներկայացնել**

Պարզեցուած կարգով՝ առանց վերջին 3 տարին Հայաստանի Հանրապետութեան մէջ մշտապէս բնակելու եւ հայերէն լեզուի իմացութեան պահանջներու պահպանման՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիություն ստանալու համար կրնայ դիմել՝

1. այն անձը, որ մինչեւ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին երկու տարուան ընթացքին օրէնքով սահմանուած կարգով գրանցուած ամուսնութեան մէջ գտնուած է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիի հետ եւ այդ երկու տարուան ընթացքին առնուազն 365 օր օրինական հիմքերու առկայութեամբ բնակած է Հայաստանի Հանրապետութեան մէջ կամ ունի Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի երեխայ, կամ

2. որուն ծնողները կամ անոնցմէ մէկը նախապէս ունեցած է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիություն կամ ծնած է Հայաստանի Հանրապետութեան մէջ, եւ որ 18 տարին լրանալէն ետք՝ 3 տարուան ընթացքին, դիմած է Հայաստանի Հանրապետութեան՝ քաղաքացիություն ստանալու համար:

Այս պարագային՝ դիմողը անձամբ պետք է ներկայացնէ.

- դիմում՝ ուղղուած ՀՀ Նախագահին
- անձնագիրը եւ անոր պատճենը /քաղաքացիություն չունեցող անձը՝ իր վկայականը եւ անոր պատճենը կամ ճամբորդական փաստաթուղթը եւ



Հայաստանի Հանրապետության մեջ կացութեան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը եւ անոնց պատճենները/

- 35 x 45 մմ չափով 6 լուսանկար
- ամուսնութեան վկայականը եւ անոր պատճենը, ամուսնոյն անձնագիրը եւ անոր պատճենը կամ տեղեկանք ամուսնոյն քաղաքացիութեան մասին
- իր երեխայի ծննդեան վկայականը եւ անոր պատճենը կամ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւնը հաստատող վկայականը եւ անոր պատճենը, կամ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիի անձնագիրը եւ անոր պատճենը
- պետական տուրքի վճարումը հաւաստող փաստաթուղթը:

Պարզեցուած կարգով Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու համար կրնայ դիմել նաեւ այն անձը, որուն ծնողները կամ անոնցմէ մէկը նախապէս ունեցած է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն կամ ծնած է Հայաստանի Հանրապետութեան մեջ եւ որ 18 տարին լրանալէն ետք 3 տարուան ընթացքին դիմած է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու համար:

Այս կարգով Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու համար կրնայ դիմել այն անձը, որը 1995 թուականի Յունուարի 1-էն ետք, իր դիմումին համաձայն, դուրս եկած է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութենէն.

Այս պարագաներուն՝ դիմողը անձամբ պետք է ներկայացնէ.

- դիմում՝ ուղղուած ՀՀ Նախագահին
- անձնագիրը եւ անոր պատճենը /քաղաքացիութիւն չունեցող անձը՝ իր վկայականը եւ անոր պատճենը կամ ճամբորդական փաստաթուղթը եւ Հայաստանի Հանրապետութեան մեջ կացութեան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը եւ անոնց պատճենները/
- 35 x 45 մմ չափի 6 լուսանկար
- ծննդեան վկայականը եւ անոր պատճենը
- պետական տուրքի վճարումը հաւաստող փաստաթուղթը:

**20. Ի՞նչ փաստաթուղթեր պետք է ներկայացնեն ազգութեամբ հայերը պարզեցուած կարգով Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու համար**

Ազգութեամբ հայերը անձամբ պետք է ներկայացնեն.

- դիմում՝ ուղղուած ՀՀ Նախագահին

- անձնագիրը եւ անոր պատճենը /քաղաքացիութիւն չունեցող անձը՝ իր վկայականը եւ անոր պատճենը կամ ճամբորդական փաստաթուղթը եւ Հայաստանի Հանրապետութեան մէջ կացութեան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը եւ անոնց պատճենները/
- 35 x 45 մմ չափի 6 լուսանկար
- ծննդեան վկայականը եւ անոր պատճենը
- պետական տուրքի վճարումը հաւաստող փաստաթուղթը:

**21. Ի՞նչ փաստաթուղթեր է անհրաժեշտ ներկայացնել ազգութեամբ հայ ըլլալը հաստատելու եւ այդ հիմքով քաղաքացիութիւն ստանալու համար**

Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել ազգութեամբ հայ ըլլալը հաստատող հետեւեալ փաստաթուղթերէն որեւէ մէկը՝

ա. ՀՀ կառավարութեան համապատասխան որոշումով (ՀՀ Կառավարութեան 2007թ. Նոյեմբերի 23-ի N 1390-Ն որոշում) նշուած եկեղեցական կառոյցներու կողմէն տրուած մկրտութեան մասին փաստաթուղթ՝ հաստատուած այդ որոշումով նախատեսուած կարգով, մկրտուածին կամ անոր ծնողին ազգութեամբ հայ ըլլալու մասին նշումով,

բ. օտարերկրեայ պետութեան իրաւասու մարմիններու կողմէն տրուած եւ ապոստիլով հաստատուած կամ հիւպատոսական վաւերացումով՝ ազգութեամբ հայ ըլլալու մասին փաստաթուղթ,

գ. ազգութեամբ հայ ըլլալու հանգամանքը հիմնաւորող այլ փաստաթուղթ՝ հաստատուած ՀՀ կառավարութեան համապատասխան որոշումով նախատեսուած կարգով,

դ. ծնողին (մեծ հօր, մեծ մօր, հարազատ քրոջ կամ եղբօր) ծննդեան վկայականը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, ուր առկայ է ազգութեամբ հայ ըլլալու վերաբերեալ նշում: Համահայր կամ համամայր եղբօր կամ քրոջ ծննդեան վկայականը կամ ազգութիւնը հաստատող ուրիշ փաստաթուղթեր անձին համար կրնան ըլլալ ազգութեամբ հայ ըլլալը հաստատող փաստաթուղթ. այս փաստաթղթերուն հետ կը ներկայացուի նաեւ տուեալ անձի ազգակցական կապը հիմնաւորող՝ իրաւասու պետական մարմիններու կողմէ տրուած փաստաթուղթ:

Ազգութեամբ հայ ըլլալը հաստատող փաստաթուղթեր կը համարուին նաեւ անձնագիրը, ծննդեան վկայականը, քաղաքացիութիւն չունեցող անձի կացութեան վկայականը, ճամբորդական փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետութեան մէջ

կացութեան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը, եթէ անոնք կը պարունակեն ազգութեամբ հայ ըլլալու վերաբերեալ նշում:

**22. Ի՞նչ փաստաթուղթեր պէտք է ներկայացնեն այն անձերը, որոնց Հանրապետութեան քաղաքացիութիւն պէտք է շնորհուի Հայաստանի Հանրապետութեան բացառիկ ծառայութիւններ մատուցած ըլլալու համար**

Այս պարագային անհրաժեշտ է ներկայացնել.

- դիմում՝ ուղղուած ՀՀ Նախագահին
- անձնագիրը եւ անոր պատճենը /քաղաքացիութիւն չունեցող անձը՝ իր վկայականը եւ անոր պատճենը կամ ճամբորդական փաստաթուղթը եւ Հայաստանի Հանրապետութեան մէջ կացութեան կարգավիճակը հաստատող փաստաթուղթը եւ անոնց պատճենները/
- 35 x 45 մմ չափի 6 լուսանկար
- պետական տուրքի վճարումը հաւաստող փաստաթուղթը:

**23. Որքա՞ն պետական տուրք պէտք է գանձուի Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու համար**

ՀՀ քաղաքացիութիւն ստանալու համար նախատեսուած է 1000 ՀՀ դրամ պետական տուրք (օտարերկրեայ պետութեան մէջ դիմելու պարագային՝ 2 ԱՄՆ տոլար, 2 Եւրո, 200 ՌԴ ռուբլի):

**24. Ի՞նչ ընթացակարգով կ'անցնին Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու համար պետական իրաւասու մարմնին ներկայացուած դիմումները**

Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու վերաբերեալ դիմումներու կապակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան ոստիկանութիւնը կը կազմէ եզրակացութիւններ, որ կ'ուղարկուին Քաղաքացիութեան հարցերով միջգերատեսչական յանձնաժողով:

**25. Ի՞նչ է Քաղաքացիութեան հարցերով միջգերատեսչական յանձնաժողովը**

Յանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որուն գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստանալու կամ դադրեցնելու վերաբերեալ դիմումներու կապակցութեամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանութեան եզրակացութիւններու քննարկումն է, անոնց վերաբերեալ ամփոփ եզրակացութիւններ կազմելը եւ զանոնք Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելը:

## **26. Ի՞նչ կազմ ունի Քաղաքացիութեան հարցերով միջգերատեսչական յանձնաժողովը**

Յանձնաժողովը կազմուած է յանձնաժողովի ղեկավարէն, անդամներէն եւ քարտուղարէն: Յանձնաժողովի կազմին մէջ կ'ընդգրկուին Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության արդարադատութեան նախարարութեան, Հայաստանի Հանրապետության պաշտպանութեան նախարարութեան, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերու նախարարութեան, Հայաստանի Հանրապետության ոստիկանութեան եւ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգութեան ծառայութեան ներկայացուցիչներ:

## **27. Ի՞նչ ընթացակարգ նախատեսուած է Քաղաքացիութեան հարցերով միջգերատեսչական յանձնաժողովին մէջ Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստանալու վերաբերեալ դիմումներու քննութեան համար**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստանալու համար եղած դիմումներուն վերաբերեալ Հայաստանի Հանրապետության ոստիկանութեան կազմած եզրակացութիւնները Քաղաքացիութեան հարցերով միջգերատեսչական յանձնաժողովին կողմէ ստացուելէն ետք 3 աշխատանքային օրուան ընթացքին յանձնաժողովի քարտուղարին կողմէ կը տրամադրուին յանձնաժողովի ղեկավարին եւ անդամներուն՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստանալու կամ դադրեցնելու համար եղած դիմումներուն վերաբերեալ Հայաստանի Հանրապետության ոստիկանութեան կազմած եզրակացութիւնները յանձնաժողովին կողմէ կը քննարկուին ստացուելէն ետք առաւելագոյնը երկամսեայ ժամկետի մէջ:

Նիստի ընթացքին յանձնաժողովը կը քննարկէ Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստանալու կամ դադրեցնելու վերաբերեալ Հայաստանի

Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացությունները: Քննարկումներու ընթացքին յանձնաժողովը կրնայ դիմել պետական կառավարման համակարգի մարմիններուն անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր եւ տեղեկություններ ստանալու նպատակով:

**28. Ի՞նչ փաստաթուղթ կը կազմուի Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական յանձնաժողովին մէջ Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստանալու համար ներկայացուած դիմումի քննարկման աւարտին**

Քննարկումներու աւարտին կը կազմուին ամփոփ եզրակացություններ, որոնք յանձնաժողովի ղեկավարին եւ անդամներուն կողմէ ստորագրուելէն ետք համապատասխան արձանագրութեան եւ Հայաստանի Հանրապետության ոստիկանության եզրակացություններուն հետ միասին մէկամսեայ ժամկետի մէջ կը ներկայացուին Հայաստանի Հանրապետության վարչապետին:

**29. Ի՞նչ իրաւասութիւն ունի Հայաստանի Հանրապետության վարչապետը Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական յանձնաժողովի եզրակացությունները ստանալէն ետք**

Հայաստանի Հանրապետության վարչապետը Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական յանձնաժողովի եզրակացությունները ստանալէն ետք՝ մէկամսեայ ժամկետի մէջ, Հայաստանի Հանրապետության Նախագահին կը ներկայացնէ քաղաքացիութիւն ստանալու դիմում ներկայացուցած անձին քաղաքացիութիւն շնորհելու կամ քաղաքացիութեան շնորհումը մերժելու մասին առաջարկութիւն՝ կցելով Հայաստանի Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագիրի նախագիծը:

Հայաստանի Հանրապետության բացառիկ ծառայութիւններ մատուցած անձերու Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն շնորհելու բացառիկ պարագաներուն՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը կրնայ անձին քաղաքացիութիւն շնորհելու մասին առաջարկութիւնը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին առանց Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական յանձնաժողովէն եզրակացութիւն ստանալու:

**30. Որո՞նք կողմէ եւ ի՞նչ վերջնական գործողութեամբ անձին կը շնորհուի Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն**

Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու վերաբերեալ հարցերը օրենքով սահմանուած պարագաներով եւ կարգով կը լուծէ Հանրապետության նախագահը՝ հրամանագիր արձակելու միջոցով:

**31. Ի՞նչպէս կրնայ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար դիմում ներկայացուցած անձը հետեւիլ դիմումի ընթացքին**

Դիմումի ընթացքին անձը կրնայ հետեւել էլեկտրոնային եղանակով՝ այցելելով ՀՀ ոստիկանության «police.am» պաշտօնական կայքէջը:

**32. Ի՞նչ ժամկէտ նախատեսուած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար ներկայացուած դիմումի քննարկման համար**

Քաղաքացիության հարցերու վերաբերեալ դիմումները կը քննարկուին վեցամսեայ ժամկէտի մէջ:

**33. Իրաւունք ունի՞ արդեօք անձը մերժումի պարագային՝ կրկին դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար**

Այո՛, իրաւունք ունի:

Դիմումի մերժումի պարագային՝ կրկին կարելի է դիմել մերժումին օրէն մէկ տարի ետք:

**34. Ի՞նչ արարողակարգ նախատեսուած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու ատեն**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձը կու տայ հետեւեալ երդումը. «Ես՝ (անուն-ազգանուն), դառնալով Հայաստանի Հանրապետության քաղաքացի, կ'երդնում հաւատարիմ ըլլալ Հայաստանի Հանրապետության, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրութիւնը եւ օրէնքները, պաշտպանել Հայաստանի Հանրապետության անկախութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը: Կը պարտաւորուիմ յարգել

Հայաստանի Հանրապետության պետական լեզուն, ազգային մշակույթը եւ սովորույթները»:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստացող անձը կը ստորագրէ երդման բնագիրը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստացող անձին կը տրուի Հայաստանի Հանրապետության Սահմանադրութիւնը:

### **35. Արդեօք կրնա՞յ Հայաստանի Հանրապետության քաղաքացին զրկուիլ քաղաքացիութենէն կամ քաղաքացիութիւնը փոխելու իրաւունքէն**

Սահմանադրութեան համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կրնար զրկուիլ քաղաքացիութենէն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կրնար զրկուիլ քաղաքացիութիւնը փոխելու իրաւունքէն:

### **36. Հայաստանի Հանրապետության քաղաքացիութիւն ստանալու կամ քաղաքացիութիւնը փոխելու իրաւունքները ենթակա՞յ են արդեօք սահմանափակման**

Նշուած իրաւունքները կրնան սահմանափակուիլ միայն օրէնքով՝ պետական անվտանգութեան, յանցագործութիւններ կանխելու կամ բացայայտելու, ինչպէս նաեւ այլ հանրային շահերու պաշտպանութեան նպատակով:

Օրինակ, օրէնքով յստակ սահմանուած է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիութենէն դուրս գալու մասին քաղաքացիի դիմումը կը մերժուի, եթէ անձի նկատմամբ յարուցուած է քրեական հետապնդում, կամ կայ դատարանի օրինական ուժի մէջ մտած եւ կատարման ենթակայ դատավճիռ կամ վճիռ, կամ անձը ունի պետութեան հանդէպ չկատարուած պարտաւորութիւններ (օրինակ՝ չէ անցած զինուորական ծառայութիւն) եւ այլն: